Ե՞ՐԲ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՀԱՅԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՂՐԻՄ

Հ. Ա. ՓՈՐՔՇԵՅԱՆ (Նալչիկ)

Ընդարձակ և բովանդակալից է հայոց անցյալը Ղրիմում։ Դա առնվազն 900 տարվա պատմություն է, որն ունեցել է վերելքների և անկումների շրջաններ։ Քաղաքական ու կրոնական հալածանքները, տնտեսական անսանձ կեղեքումը և բարբարոս հրոսակների ավերիչ արշավանքները պատճառ դարձան, որ տարագիր հայ մասսաները, թողնելով իրենց բնաշխարհը, խոշոր ու մանր խմբերով լցվեն Սև ծովի ափերը։ Հաղթահարելով բազմաթիվ արգելքներ, նրանք հիմնվել են Ղրիմի ծովափնյա և լեռնային մասերում, արյուն-քրտինքով ստեղծել կյանքի տանելի պայմաններ։ Հայերը զգալի դեր են խաղացել Ղրիմի թե՛ տնտեսական, թե՛ մշակութային կյանքում, իսկ ժամանակ առ ժամանակ՝ նաև քաղաքական ասպարեզում։ Այդ են հաստատում մեզ հասած բազմաթիվ ձեռագրերն ու հիշատակարանները, վիմագիր արձանագրությունները, տեղերի ու բնակավայրերի անունները, եկեղեցիների, վանքերի, ուսումնարանների, պարիսպների, աղբյուրների, ջրմուղների ու կամուրջների ավերակները։

Ղրիմի հայ գաղութը թե՛ տնտեսական և թե՛ մշակութային կապերով սերտորեն կապված է եղել ինչպես մայր հայրենիքի ու Կիլիկիայի հայկական պետության, այնպես էլ Լեհաստանի, Գալիցիայի, Մոլդավիայի, Վալախիայի և եվրոպական այլ երկրների հայկական գաղթավայրերի հետ։ Սակայն Ղրիմի հայ գաղթօջախի պատմությունը հանդամանորեն դեռ չի ուսումնասիրված, կան դեռ չլուծված բազմաթիվ առեղծվածներ։ Մինչև այսօր հաստատ չգիտենք, թե երբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ։ Այդ մասին կան զանազան վիճելի ենթադրություններ և հակասական կարծիքներ։

Ղրիմի հայ գաղութը չի ունեցել իր պատմիչները (գոնե մինչև օրս այդպիսիք մեզ անհայտ են)։ Պատմական աղբյուրները թե՛ մեր և թե՛ օտար գրականության մեջ շատ կցկտուր են ու անբավարար։ Հայտնի են միայն 1672 թ. Կաֆայում գրված Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ յերկրին»[1] չափածո երկը և դարձյալ նույն Կաֆայում 1690 թ. գրված Դավիթ Ղրիմեցու հիշատակարանը, որը կցված է Նոր-Նախիջևանի Նիսվիտա գյուղի եկեղեցու Հայսմավուրքին և այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում[2]։

Այդ երկու գրավոր աղբյուրները շատ նման են իրար, նրանց բովանդակությունն էլ նույնն է, որը և ցույց է տալիս ակունքների նույնությունը։

Մ. Ղրիմեցին ուղղակի գրում է.

Քանզի պատմագրաց չունիմք նախնական
Գրեալ վասն նորին պարզ և յայտնի բան,
Այլ անգիր զրուցաց յարմար և պատկան
Առեալ կամիմ լինիլ նորա պատմարան[3]։

Ըստ Ղրիմեցու տեղեկության, հայերը անեցի և շիրակեցի գաղթականներն են, որոնք Անիի անկումից հետո դնացել են Վոլգայի վրա գտնվող թաթարների երկիրը և բնակություն հաստատել Ախսարայի և Կազանի շրջակայքում։

Յաղդն Նետողական ելեալք ապաստան,
Սև ի կայսր նոցին, թաթարի մեծ խան,
Զտեղի առեալ մնան մերձ Հաճի—Թարխան,
Ախսարայ կոչեցեալ տեղին աննշան...

---

1 Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958, էջ 142—152։

2 Մատենադարան, ձեռ. № 7442։

3 Ա. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 145։

Սակայն անեցիք Ախսարայում երկար չեն մնում. նրանք կարճ ժամանակից հետո՝ «զզուեալ զմնարարու ազգաց հոնականս», թողնում են Ախսարայը, դեսպան ուղարկում ջենովական իշխանին և նրա համաձայնությամբ՝

Զուեալ Ազսարայու և դան ի Կաֆայն։
Կէսք ի Ղրիմ քաղաք ախորժեալ մնան...[4]

Ըստ Ղրիմեցու, Ախսարայից եկած ոչ բոլոր անեցիները մնացին Ղրիմում. «Կէսքս» անցան լեհաց երկիրը։

Ի գալն ազգիս Հայոց յերկիր Ղրիմայն
Եօթն հարիւր ութսուն էր մեր թուական,
Զետեղեալ մնացին ուր և ասացան՝
Ի Կաֆայ, ի Ղրիմ, ի Լեհ և Ախքիրմանն։[5]

Ղրիմեցու այս տեղեկության համաձայն, հայերի մուտքը Ղրիմ և Լեհաստան կատարվել է 1331 թ.։ Նիսվիտայի Հայսմավուրքին կցած Դավիթ Ղրիմեցու հիշատակարանի տեղեկությունները համընկնում են Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ յերկրին» երկի հետ։ Տարբերությունն այն է, որ Դավիթ Ղրիմեցին անեցիների Ախսարայից Ղրիմ գալը վերագրում է 1330 թ.՝ ընդամենը մեկ տարվա տարբերություն։

Կա նաև Հովսեփ Արղությանի փոքրիկ հիշատակարանը՝ գրված 1780 թ. հետո։ Ըստ Արղությանի, թաթարները անեցիներին բռնությամբ հանել են իրենց երկրից, բերել Ախսարայ և բնակեցրել այնտեղ։ Հայերը, անբավական լինելով իրենց վիճակից, 1331 թ. այդտեղից գաղթել են Ղրիմ[6]։ Դժվար է ասել, թե Արղությանը որտեղից է վերցրել այդ տարեթիվը։ Նա հաղիվ թե ծանոթ լիներ Մարտիրոս Ղրիմեցու պատմությանը, սակայն որպես Նոր-Նախիջևանի հասարակության հոգևոր պետ, կարող էր ծանոթ լինել Նիսվիտա գյուղի Հայսմավուրքի հիշատակարանին։ Բայց այդ էլ դժվար է որոշակի ասել, որովհետև այդ հիշատակարանը հայերի Ղրիմ գալը կապում է 1330 թ. հետ։ Թերևս, Արղությանը «անգիր գրուցաց» հիման վրա է գրել իր հիշատակարանը։

Բացի սրանից, Արղությանը իշխան Գրիգոր Պոտյոմկինին ներկայացրած իր զեկույցի մեջ 1789 թ. գրում է, որ հայերի գաղթը Սարայից Ղրիմ տեղի է ունեցել 1340 թ.[7]։ Մեզ հայտնի չէ, թե որտեղից է վերցրել այդ տարեթիվը Արղությանը, սակայն գիտենք, որ այդ տարեթիվը մտել է այն ժամանակվա պատմարանների երկերի մեջ և երկար ժամանակ համարվում էր Ղրիմի հայոց գաղթի անվիճելի սկզբնակետը։

Հայ պատմագիտությունը շատ քիչ է զբաղվել Ղրիմի հայերի անցյալով, խոր հետազոտություններ և հնագիտական պեղումներ չեն կատարվել։ Այդ հարցով առաջին անգամ զբաղվել է Մինաս Բժշկյանը իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքում։ Երկար տարիներ ապրելով Ղրիմում, լավ ճանաչելով հայ համայնքները ու բնակավայրերը, նա բազմաթիվ նյութեր է հավաքել ապագա պատմարանի համար։ Նա առաջինն էր, որ լուրջ ուշադրություն դարձրեց Նիսվիտա գյուղի եկեղեցու Հայսմավուրքի հիշատակարանի վրա, արտագրեց և տպագրեց այն իր գրքում։ Այդ հիշատակարանը նա համարում է Ղրիմի հայերի պատմության հիմքը։ «Եկեալ ի յԱխսարայէ իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք վառեալք գինու, պատերազմելով ընդ թաթարաց, ճեղքեալ գան ի Ղրիմ և բնակին ի Ֆէոդոսիա, ի Կաղարաթ, և ի Սուրխաթ և ի կողմանս սոցա, այս եղև ՉԼԹ (1330) թվին»[8]։

Հայերի գաղթի սկզբնավորումը որոշելիս Բժշկյանը ամբողջովին հենվում է այդ հիշատակարանում նշված 1330 տարեթվի վրա։ Թեոդոսիայի թանգարանում տեսնելով հայտնի ասպիդ քարը և կարդալով հիշատակարանի ՆՀԶ տարեթիվը (1027), նա շտապում է նկատել. «Թվի թէ դայս վեմ բերեալ են դաստ յԱնւոյ և եգեալ յեկեղեցի ինչ»[9]։ Այդ կարծիքի հիման վրա էլ Թեոդոսիայի թանգարանը իր ցուցակներում ասպիդը համարում է Անիից բերված։

---

4 Ա. Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 145։

5 Նույն տեղում, էջ 146։

6 Վ. Հ ա կ ո ր յ ա ն, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. II, էջ 529։

7 Տե՛ս Сестренцевич-Богуш, История о Таврии, СПб, 1806, հատ. II, էջ 176—178։

8 Մ. Բ ժ շ կ յ ա ն, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 335—342։

9 Նույն տեղում, էջ 347։

Բժշկյանը, սակայն, նույն աշխատության մեջ գրում է, որ 1060 թ. և ապա 1064 թ. «Հայք քաղաքացիք և գիւղացիք գաղթեցան ի Լեհաստան և Մոլտովիա»[10]։ Պատմությունից գիտենք, որ այդ գաղթականները (և առհասարակ Եվրոպայում ապրող հայ գաղթականները) սկզբում եղել են Ղրիմում և ապա այնտեղից անցել Եվրոպա։ Բժշկյանը նույն գրքում գրում է. «1313 թվին Քեֆէն հայք միաբանեցան ընդ լատինացւոց»[11]։ Չնայած այս հիշատակություններին, Բժշկյանը հայերի մուտքը Ղրիմ, այնուամենայնիվ, համարում է 1330 թ.։

Ղրիմի ընդհանուր պատմությամբ զբաղվող երկրորդ հայ հեղինակը եղել է Հովհաննես Տեր-Աբրահամյանը, որն իր ընդարձակ գրքում մի գլուխ է նվիրել հայերի անցյալին։ Ամբողջովին հենվելով Նիսվիտայի Հայսմավուրքի հիշատակարանի վրա, նա գնում է Բժշկյանի հետքերով։ Թեոդոսիայի թանգարանի ասպիդ քարի տարեթիվը նա ևս կարդում է ՆՀԶ (476 + 551 — 1027) և գտնում, որ այդ քարը «Անիէն բերած են այժմու խրիմեցոց նախնիքը»[12]։

Երվանդ Շահազիզը իր «Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը» գրքում, խոսելով վանքի՝ Ղրիմից բերված պղնձե խաչի մասին, որի վրա արձանագրված է «Ստանդնեցաւ Ս. Նշանս ի բարեխօսութիւն խաթունին, պարոն Զաքարի դուստեր ի թվին ՉՀԸ (1329)», եզրակացնում է. «Ասել է թե այս խաչը շինված է անեցոց Ղրիմի թերակղզին ժամանելուց մի տարի առաջ, որովհետև անեցիք, ինչպես հայտնի է Նոր-Նախիջևանի ձեռագիր Հայսմավուրքի հիշատակարանից, հասել են Ղրիմ 1330 թվին»[13]։ Երկու տարի հետո «Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք» գրքում Եր. Շահազիզը գրում է, որ անեցիք թաթարաց խանի հրամանով եկել են Ախսարայ 1299 թ. և 41 տարի այնտեղ մնալուց հետո, այսինքն 1340 թ. անցել Ղրիմ[14]։ Շահազիզը ցույց չի տալիս, թե ո՞րն է այս երկու թվականներից ճիշտը։ Հայ հեղինակներից միայն Գաբրիել Պատկանյանն է հաստատ կերպով ասում, որ Ախսարայի անեցիք, զենք բարձրացնելով թաթարների դեմ, «ելան բազմությամբ և հաղիվ 1330 թ. Տավրիկյան թերակղզին հասան, ուր արդեն կային բազում հայք և նոցա հետ միասին բնակվեցան»[15]։ Դ. Պատկանյանի այս տեսակետին համամիտ է նաև Հ. Բոգդանյանը[16]։

Այսպիսով, կարելի է ասել, որ հայ պատմագիտությունը մինչև այսօր Ղրիմի հայոց գաղթի սկզբնավորման մասին մի որոշ եզրակացության չի եկել։

Մի կողմից Արղությանի, նրա սխալի վրա հենված Սեստրենցևիչի, Կեպենի և Կարամզինի, մյուս կողմից Նիսվիտիայի Հայսմավուրքի հիշատակարանով կաշկանդված Բժշկյանի, Տեր-Աբրահամյանի և Շահազիզի գլխավոր սխալն այն է, որ նրանք բոլորն էլ այն կարծիքին են, թե Ղրիմի հայոց գաղթը կատարվել է միանգամից, թե Ախսարայից 1330 և 1340 թթ. եկել են այնտեղ գաղթած անեցիք և հիմնել Ղրիմի գաղութը, թե բոլոր գաղթականները անեցիներ ու շիրակեցիներ են և նրանցից առաջ ոչ մի հայ գաղթական չի եղել Ղրիմում։

Պատմական փաստերը հերքում են այդ կարծիքը և վկայում ուրիշ բան։ Այս հարցերի ուսումնասիրությամբ XIX դ. երկրորդ կեսին որոշ չափով զբաղվել է Օդեսայի պատմա-հնագիտական ընկերությունը, որը հիմնվել էր 1839 թ.։ Այդ ընկերության պրեզիդենտ պրոֆեսոր Վ. Յուրգևիչը, պրոֆեսոր Ֆ. Բրունը, Մուրզակևիչը և Գաբրիել Այվազովսկին իրենց հետազոտություններով նպաստեցին վերոհիշյալ խնդիրների լուսաբանությանը։

Վ. Յուրգևիչը, չժխտելով Պոտյոմկինին ներկայացրած Արղությանի զեկույցի բովանդակությունը, գտնում է, որ հայերը XIII դարում իսկապես կարող էին գաղթած լինել Վոլգայի ափերը, իսկ այնտեղից էլ 1340 թ.՝ Ղրիմ, սակայն բազմաթիվ անվիճելի փաստերի հիման վրա եզրակացնում է, որ հայերի մուտքը Ղրիմ տեղի է ունեցել Արղությանի ցույց տված 1340 թվականից շատ առաջ։ Նկատի ունենալով Հայաստանի վիճակը X դ. վերջին և XI դ. սկզբին, մի կողմից սելջուկների արշավանքները, մյուս կողմից Հայաստանի նկատմամբ բյուզանդական կայսրերի վարած նենգամիտ և քայքայիչ քաղաքականությունը, նա գտնում է, որ այդ ամենը առիթ է

---

10 Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 83։

11 Նույն տեղում, էջ 334։

12 Հ. Տ ե ր-Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Պատմութիւն Խրիմու, Թեոդոսիա, 1865, էջ 97—99։

13 Ե ր. Շ ա հ ա զ ի զ, Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը, Թիֆլիս, 1901, էջ 7։

14 Ե ր. Շ ա հ ա զ ի զ, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, Թիֆլիս, 1903։

15 Գ. Պ ա տ կ ա ն յ ա ն, Նոր-Նախիջևանի պատմությունը, Ն. Նախիջևան, 1917, էջ 3։

16 Я Богданян, Из прошлого, Ростов на-Дону, 1947.

տվել հայ ժողովրդին փոքր ու մեծ հատվածներով դուրս գալ մայր հայրենիքից և գաղթել Ղրիմ, Մոլդավիա, Վալաքիա, Գալիցիա, Լեհաստան և այլ ապահով վայրեր[17]։

Բազմաթիվ պատմական աղբյուրներից հայտնի է, որ Կաֆայում շատ վաղուց գոյություն է ունեցել հայոց հոգևոր թեմ, որը միշտ գլխավորել է հայ եպիսկոպոսը։ Մենք չգիտենք, թե այդ թեմը երբ է սկսել իր գոյությունը։ Ջենովական աղբյուրներից հայտնի է միայն, որ թեմի առաջնորդարանը Կաֆայում ունեցել է սեփական ջրմուղ, որը ջուր է մատակարարել բոլոր քաղաքացիներին։ Կաֆային և բոլոր սեծովյան գաղութներին վերաբերող 1290, 1313, 1316, 1413 և 1449 թթ. կանոնագրքերը, որոնք հրատարակվել են Ջենովայում, անխտիր իրենց հսկողության և պաշտպանության տակ են վերցրել «հայոց եպիսկոպոսի ջրմուղի անձեռնմխելիությունը»[18]։ Ղրիմի շատ բնակավայրերում գործում էին գլխավորապես հայերի կառուցած աղբյուրներն ու ջրմուղները, որոնց մի մասը մինչև օրս էլ գործում է և չի կորցրել իր նշանակությունը։ Գյուրների ասելով, XIX դ. երկրորդ կեսին ջրաբաշխման սիստեմը Կաֆայում ոչնչով չի տարբերվել 600 տարի առաջ գոյություն ունեցած սիստեմից[19]։

Մինչև այսօր մելիորատորները ուսումնասիրում են Ղրիմի հայերի անցկացրած ջրմուղները։ Ղրիմի Կրկնախարիսխ ծովածոցի մոտ գտնվող հայոց քանդված վանքի ջրմուղի մասին Պ. Ն. Բաբկովը 1939 թ. գրել է. «Կրկնախարիսխ ծովածոցի հայոց վանքը ունեցել է ջրի լավ մատակարարում և նրա ջրմուղը, այժմ կիսով չափ քանդված, արժանի է առանձին ուշադրության»[20]։

Կաֆայի 1316 թ. կանոնագիրքը հիշատակում է երեք քարաշեն հայոց եկեղեցիների մասին, որոնցից մեկը եղել է «շատ հին, խարխուլ և կիսակործան»։

Սուդակի հունաց եկեղեցու 1006 թ. գրված ձեռագիր Հայսմավուրքի լուսանցքում Անտոնիոս վարդապետը 1861 թ. նկատել է մի դիտողություն, որ վերաբերում է Սուդակի հայերին։ Այդ դիտողության համաձայն, 1292 թ. հայերը զատիկը տոնել են ապրիլի 6-ին, այնինչ մյուս քրիստոնյաները՝ ապրիլի 13-ին[21]։ Պարզ է, որ 1292 թ. Սուդակում ապրել են բավականաչափ հայեր, և նրանց մասին խոսում են որպես առանձին համայնքի։

Նույն Հայսմավուրքի լուսանցքների հավելումների մեջ Անտոնիոս վարդապետը հայտնաբերել է մի այլ դիտողություն, որը վերաբերում է ավելի վաղ շրջանի և չի նկատվել Յուրգևիչի և Բրունի կողմից. Հայսմավուրքի լուսանցքում 1242 թ. տակ հիշատակված է Սմբատի որդու, Աստծո ծառա Դավթի մահը[22]։ Սմբատը և նրա որդին Սուդակի հասարակության մեջ, անշուշտ, հայտնի և որոշ դիրք ունեցող մարդիկ են եղել, որ արժանացել են տեղ գտնելու հունաց Սենաքսիրի հիշատակարանում, որտեղ խոսվում է ժամանակի հասարակական նշանակություն ունեցող դեպքերի մասին։

Յուրգևիչը հիշատակում է Գալիցիայի իշխան Թեոդոր Դիմիտրիևիչի՝ Լվովի հայոց եկեղեցու կապիտուլում գտնված հրովարտակը, որը գրված է 1062 թ. և ուղղված կասոխացի հայերին։ Իշխանը հրավիրում է կասոխացի հայերին իր երկիրը՝ լեհ թագավորների դեմ միացյալ ուժերով կռվելու համար, խոստանալով նրանց պարգևել զանազան արտոնություններ։ Յուրգևիչը առանց որևէ հիմքի գրում է, թե «կասոխացի» բառը արտագրողի սխալն է և պետք է լինի «սոլխաթցի» կամ «հին-ղրիմեցի»։ Այդ կարծիքին է նաև Պետրուշևիչը։ Այդ սխալ կարծիքը մենք արդեն հերքել ենք[23]։ Նշված սխալն առաջացել է «կասոխ» կամ «կասոխացի» բառերը հասկանալուց։ Նրանց հայտնի չի եղել, որ XI դ. բոլոր չերքեզները կոչվում էին կասոխներ

---

[17] „Записки Одесского Общества истории и древностей", кн. V, Одесса, 1861, էջ 827—829։

[18] Նույն տեղում, տե՛ս „Устав Ганузских колоний 1449 г.", թարգմ. Վ. Յուրգևիչի, ծան. 90։

[19] Ю. Гюбнер, Древняя и новая Феодосия в санитарном отношении, СПб, 1875, էջ [illegible]։

[20] П. Н. Бабков, Водоснабжение Армянского монастыря XV в. в Двуякорной бухте у Феодосии. „Известия Государственного Географического общества", 1939, № 7, էջ 1013։

[21] Архимандрит Антоний, Заметки XII—XV вв., „Записки Одесского Общества истории и древностей за 1863 г.", кн. V, ч. II, էջ 603։

[22] Նույն տեղում։

[23] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, «Երբ և որտեղից են գաղթել հայերը Չերքեզիա»։

կամ կասոխայիք, իսկ Չերքեզիայում ապրած հայերը՝ կասոխացի հայեր։ Բոլոր պարագաներում այստեղ մեզ համար կարևորն այն է, որ 1062 թ. Սոլխաթում հայեր են ապրել։

Այս և նման այլ փաստերի հիման վրա հեղինակը գալիս է այն եզրակացությաս, որ հայերի գաղթը դեպի Ղրիմ սկսվել է XI դ. սկզբից ոչ ուշ[24]։

Ֆ. Բրունը, կանգ առնելով Յուրգևիչի մեջ բերած բոլոր կետերի մանրազնին քննության վրա, հավաստում է նրա եզրակացությունը և գտնում, որ հայերի մուտքը Ղրիմ եղել է ոչ միայն Արղությանի ցույց տված 1340 թ. շատ առաջ, այլև ավելի վաղ, քան ջենովացիների ու թաթարների մուտքը[25]։

Մինչև Կաֆայի բարձրանալը, Սև ծովի առևտրական կենտրոնների մեջ առաջին տեղը բռնում էր Սուդակը։ Ամբողջ տարանցիկ առևտուրը XIII դ. անցնում էր Սուդակի վրայով։ Արաբ ճանապարհորդները Սև ծովը հաճախ անվանում են Սուդակի ծով։ Ռուսաստանը ևս մեծ մասնակցություն ուներ այդ առևտրի մեջ։ Ռուսները ապրել են առանձին, Սուռոժ կոչվող արվարձանում։ Կաթոլիկ միսիոներ Ռուբրուկվիսը, որ Սուդակում եղել է 1253 թ., պատմում է, որ ռուսները Մոսկվայից այստեղ են բերել սկյուռի, կզաքիսի մորթիներ և փոխել չթի, մետաքսի և այլ գործվածքների հետ։ Մորթիները արտահանվել են Կոստանդնուպոլիս և Եվրոպա։

Ըստ Բրունի, հայերը ինչպես վենետիկցիների, այնպես էլ ջենովացիների շրջանում միշտ կազմել են Սուդակի ազգաբնակչության մեծամասնությունը[27], դավանանքով եղել են հիմնականում կաթոլիկներ և ունեցել են իրենց թեմական-առաջնորդն ու աթոռանիստ եկեղեցին։ Ռուբրուկվիսը հիշատակում է, որ Սուդակում ունեցել է շատ պատվավոր ընդունելություն եպիսկոպոսի և հոգևորականության կողմից։ Բրունը գտնում է, որ այդ ընդունելությունը կազմակերպել են հայ կաթոլիկ եպիսկոպոսն ու հոգևորականությունը իրենց կաթոլիկ եկեղեցում[28]։ Նրա կարծիքով անկարելի բան է, որ հույները այդպիսի փառավոր ընդունելություն ցույց տված լինեին մի կաթոլիկ միսիոների, որը դրանից քիչ առաջ Պոլսում խորտակիչ քարոզով հանդես էր եկել իրենց դավանանքի հիմունքների դեմ։ Հետագա դարերում, ինչպես հայտնի է, հայերը այնքան են բազմանում և ուժեղանում Ղրիմում, որ ժամանակակից գրողները Ղրիմի հարավային մասը անվանում էին «Ծովային Հայաստան» (Armenia maritima)։

Մինչև այժմ Սուդակում կանգուն է հայ կաթոլիկների հինավուրց եկեղեցին, որը հայտնի պատմաբան պրոֆեսոր Վ. Դ. Սմիրնովի կարծիքով «Սուդակի ամենաարժեքավոր հնությունն է»[29]։

Թեպետ Բրունը չի որոշում հայերի Ղրիմ մտնելու տարեթիվը, այնուամենայնիվ, նրա կարծիքով ևս հայերն այնտեղ եղել են Արղությանի ցույց տված ժամանակվանից շատ առաջ[30], նույնիսկ թաթարների և ջենովացիների Ղրիմ գալուց էլ շատ առաջ[31]։

Օդեսայի պատմա-հնագիտական ընկերության երրորդ անդամը, որ զբաղվել է Ղրիմի հայոց անցյալի ուսումնասիրությամբ, Գաբրիել Այվազովսկին է։ Նա անցյալ դարի հիսունական թվականների վերջերից ապրում էր Թեոդոսիայում։ Յուրգևիչը և Բրունը իրենց հետազոտությունների ընթացքում հայոց պատմության վերաբերյալ տեղեկությունները վերցրել են նրանից։ Այվազովսկին առաջինն էր, որ ռուսերեն հրատարակեց Հարավային Ռուսաստանում և Ղրիմում գտնվող հայոց եկեղեցիների և դերեզմանաքարերի հիշատակարանները, որոնք հաստատում են, որ հայերը մուտք են գործել Հարավային Ռուսաստան և Ղրիմ XIV դ. շատ առաջ[32], որ ղրիմեցի հայերը Անիի և Շիրակի գաղթականների հետնորդներն են։ Գաղթականության սկզբնավորումը

---

[24] „Записки Одесского Общества истории и древностей", տես „Устав Гануэзских колоний 1449 г.", թարգմ. Վ. Յուրգևիչի, ծան. 90, գիրք V, 1861, էջ 827—829։

[25] Ф. Брун, Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 137։

[26] В. Рубрук, Путешествие в восточные страны, СПб, 1911, էջ 66—67։

[27] Ф. Брун, նշվ. աշխ., էջ 140։

[28] Նույն տեղում, էջ 139—140։

[29] В. Д. Смирнов, Археологическая экскурсия в Крым летом 1886 г., „Записки Восточного отделения импер. Русского археологического общества", т. I, вып. IV, СПб, 1887, էջ 273—302։

[30] Ф. Брун, նշվ. աշխ., էջ 137—140։

[31] „Записки Одесского Общества истории и древностей", т. IV, Одесса, 1863, էջ 628։

[32] Г. Айвазовский, Заметки о происхождении новороссидских армян. „Записки Одесского Общества истории и древностей", кн. VI, 1867, էջ 550։

Այվազովսկին համարել է X դարը։ Տեղյակ լինելով Փոքր Ասիայի հույների, հայերի և Թուրքերի պատմությանը, նա փաստերով հիմնավորում է, որ Փոքր Ասիայից և Պոլսից ոչ հեռու գտնվող վայրերում բնակվող հայերը X դ. սկսել են գաղթել դեպի Տրապիզոն, այնտեղից՝ Կաֆա, Սուդակ և Սև ծովի այլ առափնյա քաղաքները, մինչև իսկ Դնեպրի գետարերանն ու ափերը։ Այդ գաղթը ավելի ուժեղացել և մասսայական է դարձել 1064 թ. սկսած, երբ սելջուկների առաջնորդ Ալփ-Արսլանը գրավեց և ավերեց Անին։ Երկրորդ մեծ գաղթը դեպի Սև ծովի ափերը տեղի է ունեցել 1239—1240 թթ., երբ Ուխտա խանի ավազակախմբերի ղեկավար Ջարմաղանը գրավեց և կրկին կործանեց Անին[33]։

Ղրիմի հայ գաղութի սկզբնավորման հարցով զբաղվել է նաև Ք. Քուշներյանը։ Նրա կարծիքով, «խա-արների ժամանակ Ղրիմ են գաղթել բազմաթիվ հայեր և շինել իրենց եկեղեցիները»[34]։ «Մեր կարծիքով,—գրում է նա,—Ժ դարից բռնած հայք ապրել են Տավրիո զանազան տեղերում»[35]։ Ք. Քուշներյանի այս կարծիքը ամբողջովին համընկնում է Գ. Այվազովսկու կարծիքին։ Հայտնի է, սակայն, որ 711 թ. հայ իշխան Վարդանը, գտնվելով Խերսոնեսում, խազարների օգնությամբ բարձրացավ բյուզանդական կայսերական գահը՝ Փիլիպիկոս անունով[36]։ Այստեղից եզրակացություն, որ Ղրիմում X դ. առաջ ևս ապրել են հայեր։

Քուշներյանը ռուսերեն է թարգմանել և Օդեսայի պատմա-հնագիտական հանդեսում տպագրել Մինաս Բժշկյանի վերը հիշված գրքում մեջ բերված բոլոր հայերեն արձանագրությունները[37]։

Ուշադրության արժանի է Քուշներյանի կարծիքը Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցու հնության մասին. «Ըստ իմ կարծյաց, Քաֆա քաղաքին միջավայր դեռ կանգուն Ս. Սարգիս եկեղեցին մեծ և զորավոր ապացույց է հայոց վաղեմ գոյության ի քաղաքիս։ Այս եկեղեցվույն ետևի կողմեն ընդ մեջ որմին ագուցիք խաչքարինք, հայտնի վկա են եկեղեցվույն շատ հին լինելուն, քանզի մինչդեռ բազմաթիվ խաչքարինք ԺԴ դարի ի խոնարհ անաղարտ մնացել են իրանց տառերով, Ս. Սարգսի որմին մեջ ագուցածեալները մաշած և ավրված են, չի կարելի կարգալ նոցա թվականը։ Ս. Սարգիսը միակ եկեղեցին է քաղաքի մեջ. բոլոր մյուս եկեղեցիները կենդրոնեն հեռու են, գտնվում են այժմվա արգելանոցին մեջ, ուր 1330 թ. եկած հայերը ապրել են առանձին թաղով»[38]։

Հեղինակը եզրակացնում է, որ Ս. Սարգիս եկեղեցին շինված է 1330 թ. առաջ, մինչև անեցիների գալը, հավանաբար ջենովացիների Ղրիմ գալուց էլ առաջ։

XX դ. առաջին կեսում Ղրիմի պատմության ուսումնասիրության մեջ խոշոր ավանդ մտցրեց ռումինական Գիտությունների ակադեմիայի անդամ-քարտուղար պրոֆեսոր Գ. Բրատիանուն իր երկու բարձրարժեք հետազոտություններով։ Զբաղվելով Սև ծովի ավազանում XIII դ. ջենովացիների կատարած առևտրական գործունեության հետազոտությամբ, նա իր ուսումնասիրությունը հիմնավորեց իտալական սկզբնաղբյուրներով։ Սև ծովի գաղութներին վերաբերող բոլոր փաստաթղթերը պահված են Ջենովայի Ս. Գեորգ Բանկի արխիվում։ Բրատիանուն այդ արխիվում հայտնաբերեց և 1927 թ. հրատարակեց Կաֆայի և Բերայի նոտարական գրասենյակներում 1281—1290 թթ. ընթացքում գրված և վավերացված առևտրական պայմանագրերը, որոնք անհերքելի ճշտությամբ ապացուցում են հայերի մասնակցություն ջենովական առևտրի շրջանառության մեջ։ Դրանք ցույց են տալիս նաև, թե հայերը ինչ տեսակ առևտրով և ինչ արհեստներով են զբաղված եղել։

Այդ պայմանագրերում հիշատակվում են Տրապիզոն ցորեն տեղափոխելու համար նավ վարձողների, Սիրիա փող փոխադրողների, Սինոպ ապրանք առաքողների, իրենց արհեստի արտադրանքը վաճառողների և բազմաթիվ ուրիշ հայերի ազգանուններ[39]։ Այդ արժեքավոր փաստաթղթերը հրատարակելուց երկու տարի հետո, Բրատիանուն լույս ընծայեց XIII դ. Սև ծովի

---

[33] Г. Айвазовский, Նշվ. աշխ., էջ 550։

[34] Ք. Քուշներյան, Պատմութիւն դաղթականութեան Խրիմու հայոց, Վենետիկ, 1895, էջ 92։

[35] Նույն տեղում, էջ 105։

[36] Юлиан Кулаковский, Прошлое Тавриды, Киев, 1914, էջ 67, М 111—112։

[37] „Записки Одесского общества истории и древностей", кн. X, էջ 459—496։ Кушнеров, Армянские древности Таврического полуострова.

[38] Ք. Քուշներյան, Նշվ. աշխ., էջ 102—104։

[39] G. Bratianu, Actes des notaires Genois de Pera et de Caffa de la fin du treizieme siecle (1281—1290), Bucarest, 1927։

ավազանում ջենովացիների կատարած առևտրի մասին իր ստվար մենագրությունը։ Նա խոշոր տեղ է տալիս հայերի մասնակցությանը ոչ միայն Ղրիմում, այլև Սև ծովի բոլոր ծովափնյա քաղաքներում կատարված առևտրին։ Նրա ասելով, հայերը առաջնակարգ դեր են կատարել այդ առևտրի մեջ[40]։

Մեզ հետաքրքրող հարցի գիտական հետազոտության գործում կարևոր նշանակություն ունեն Ղրիմում և Հարավային Ռուսաստանի զանազան վայրերում գտնվող հայոց եկեղեցիներն ու վանքերը, նրանց ավերակները և Ղրիմում գրված բազմաթիվ ձեռագիր հիշատակարանները։ Դրանց առաջին հավաքողը եղել է Մինաս Բժշկյանը, որը իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքի մեջ 1830 թ. հրատարակեց հիշատակարաններից մի քանիսը։ Սակայն անհրաժեշտ է նկատել, որ Բժշկյանը յուրահատուկ մոտեցում ունի դեպի այդ աղբյուրները։ Երբ վերջիններս իրենց տեղեկություններով հերքում էին նրա կանխակալ կարծիքը, նա իսկույն մի կերպ չեզոքացնում էր նրանց բովանդակությունը։

Անցյալ դարի վաթսունական թվականներին այդ հիշատակարանների հետազոտությամբ զբաղվել է Գաբրիել Այվազովսկին։ Օդեսայի պատմա-հնագիտական ընկերության առաջարկությամբ նա ռուսերեն հրատարակեց այդ հիշատակարանները[41]։ Այվազովսկու եզրակացությունը հայերի գաղթի ժամանակը որոշելու հարցում մեծ մասամբ հիմնված է այդ հիշատակարանների վրա։ Շատ պատմաբաններ, ինչպես օրինակ՝ Յուլիան Կուլակովսկին, Ղրիմի հայկական գաղթի սկզբնավորումը որոշելիս հիմնվում են այդ հիշատակարանների և Այվազովսկու կարծիքի վրա[42]։

Հիշատակարանների հետազոտությամբ զբաղվել են Հ. Տեր-Աբրահամյանը[43], Ք. Քուշներյանը[44] և շատ ուրիշներ։ Հարցի բազմակողմանի ուսումնասիրությամբ անցյալ դարի 90-ական թթ. զբաղվել է նաև Լազարյան ճեմարանի ուսուցիչ Խ. Քուչուք-Հովհաննիսյանը, որը անձամբ այցելելով Ղրիմի և Պոդոլիայի բոլոր եկեղեցիներն ու նրանց ավերակները, արտագրել և հավաքել է 150-ի չափ հիշատակարաններ, որոնք հետո հրատարակեց Մոսկվայի Հնագիտական ընկերության պարբերականում[45]։ Մեջ ենք բերում Քուչուք-Հովհաննիսյանի եզրակացությունը. «1895 և 1896 թթ. այցելելով Պոդոլիա, Բեսարաբիայի և Տավրիկյան նահանգները, ես հավաքեցի շուրջ 150 արձանագրություններ, որոնցից ամենահները, ինչպես օրինակ՝ Ակքերմանի 967 թ. և Թեոդոսիայի 1047 թ. արձանագրությունները, վկայում են, որ գաղթականական շարժումը Հայաստանից դեպի Արևելյան Եվրոպա, այսինքն այժմվա Ռուսաստան, սկսվել է X և XI դդ.։ Նա շարունակվել է հետագա դարերում, չի դադարել և մինչև այժմ»[46]։ Ինչպես տեսնում ենք, Քուչուք-Հովհաննիսյանի տեսակետը ամբողջովին համընկնում է 30 տարի նրանից առաջ Գ. Այվազովսկու արտահայտած կարծիքին։

Տարիներ առաջ ակադ. Հովսեփ Օրբելին, քննադատելով Քուչուք-Հովհաննիսյանի այդ աշխատանքը, նրա կատարած ընթերցումները և թարգմանությունները, նկատել է սխալներ և կասկածի տակ առել նրա ամբողջ գործը։ Օրինակ, Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցու հայտնի արձանագրության տարեթիվը Քուչուք-Հովհաննիսյանը կարդում է 496 + 551 — 1047, իսկ Հ. Օրբելին՝ 1006 + 551 = 1557[47]։ Վիճաբանության առարկա է եղել մանավանդ Թեոդոսիայի թանգարանում գտնվող մի ասպիդ տապանաքար, որի տարեթիվը պատմաբանների մեծ մասը կարդացել է ՆՀՁ՝ 476 + 551 = 1027 թ.։ Թեոդոսիայի թանգարանի աշխատակից Զաբոլոցկին 1939 թ. Ի. Ի. Բարկովին խնդրեց կարդալ և մեկնել այդ տարեթիվը։ Բարկովը կատարեց այդ աշխա-

---

[40] G. Bratianu, Recherches sur le commerce Genois dans la mer Noire en XIII siecle, Paris, 1929, էջ 173։

[41] „Записки Одесского Общества истории и древностей", кн. VI, Одесса, 1867. Г. Айвазовский, Армянские надписи, находящиеся на юге России, էջ 323—333։

[42] Ю. Кулаковский, Նշվ. աշխ., էջ 111—112։

[43] Հ. Տեր-Աբրահամյան, Պատմութիւն Խրիմու, Թեոդոսիա, 1865։

[44] Ք. Քուշներյան, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց։

[45] „Древности восточные", Труды восточной комиссии Импер. Московского Археологического общества. т. II, вып. III, Москва, 1903. Хр. Кучук-Иоаннесов, Старинные армянские надписи и старинные рукописи в пределах Юго-Западной Руси и в Крыму, էջ 33—75։

[46] Նույն տեղում, էջ 75։

[47] Տե՛ս Л. М. Меликсет-Бек, Из истории русско-армянских отношений. ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 4, էջ 28։

տանքը։ Հայտնի է, որ այդ տապանաքարը հնագիտական թանգարան է բերվել նրա բացման ժամանակ, 1811 թ.։ Մինաս Բժշկյանը խոսում է այդ քարի մասին իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքի մեջ, որ հրատարակված է 1830 թ.։ Դրանից առաջ այն պահվել է Ս. Հեորդ եկեղեցում։ Այդ տապանագրի հիշատակարանն է՝

Բարկ—
Խաւս է ՍԲ նշանքս Գրիգ—
որին եւ իր զաւակին։

Տապանաքարի ձախ անկյունի վերին եղերքի շերտը կոտրված է, երևի այդտեղ գրված է եղել ԹՎ, ինչպես որ իր ժամանակին կարդացել է Գարրիել Այվազովսկին։ Տապանաքարի աջ կողմի վերևի անկյունում գրված է մեզ հետաքրքրող տարեթիվը։ Բարկովը գտնում է, որ տարեթվի տասնավորները ցույց տվող «Հ» և միավորները ցույց տվող «Զ» տառերը գրված են գլխատառով և ոչ մի կասկած չեն հարուցում։ Նրան կասկածելի է թվում հարյուրակները ցույց տվող սկզբնատառը։ Բարկովի կարծիքով առաջին տառը Ն (400) չէ, որովհետև նրա ստորին մասի աջ ծայրը փոխանակ վերև բարձրանալու, թեքվում է ներքև։ «Զ» էլ չի կարելի կարդալ, որովհետև վերևում կոճակածակ չունի։ Նրա կարծիքով դա փաքրատառ «չ»-ն է։ Այդ հիման վրա նա այդ տարեթիվը 476-ի փոխարեն կարդում է 776 և ստանում է 1327 թ.։ Այսպիսով, Բարկովը հայերի գաղթի սկիզբը դեպի Ղրիմ հետաձգում է 300 տարով։ Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ. «Օրբելին կասկածի է ենթարկում Քուչուք-Հովհաննիսյանի հրատարակած Հարավային Ռուսաստանում գտնվող հայկական հիշատակարաններից երկուսի տարեթվերը, որոնք ամենահներն են... Այժմ մենք ապացուցում ենք հնագույնը համարվող երրորդ հիշատակարանի սխալ ընթերցումը. մենք գտնում ենք, որ 1027 թ. փոխարեն պետք է լինի 1327։ Այդ ստիպում է լրջորեն մտածել դեպի Ղրիմ հայկական գաղթականական շարժման սկզբնավորման մասին»[48]։ Բարկովը խորապես սխալվում է, երբ կարծում է, թե հայկական գաղթօջախի հիմնվելու մասին մեր ունեցած տեղեկությունը միայն տվյալ թվականն է և այդ թվականն այլ ձևով վերծանելու դեպքում, պետք է վերանայել Ղրիմի հայ գաղթօջախի սկզբնավորությունը։ Մենք արդեն բերեցինք մի շարք անհերքելի փաստեր Ղրիմում հաստատված հայ բնակչության մասին դեռևս XI դարում։ Բարկովը ինքն էլ վերջնական չի համարել իր եզրակացությունը. «Մենք կարծում ենք,—գրել է նա,—որ այդ հարցի լուծումը կախված է այդ բնագավառի ապագա խոր հետազոտություններից, իսկ առայժմ հարցը պետք է համարել բաց, չլուծված»[49]։

Իհարկե, անկարելի է չհամաձայնել գիտնականների այն կարծիքի հետ, թե հիմնական մեծ և զանգվածային գաղթը Հայաստանից դեպի Ղրիմ և այլ վայրեր սկսվել է XI դ. սկզբին և ավելի է ուժեղացել Անիի կործանումից հետո։ Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ X և XI դարերը ևս չեն կարող համարվել հայերի դեպի Ղրիմ գաղթելու սկիզբը։

Ջանազան մանր ու խոշոր փաստեր իրավունք են տալիս մեզ ասելու, որ հայերի գաղթը դեպի Ղրիմ և Սև ծովի առափնյա քաղաքները սկսվել է ավելի վաղ։

* * *

Ինչպես հայտնի է, Արշակունյաց անկումից հետո, մինչև Բագրատունիների և Արծրունիների «կամավոր գաղթը» Կապադովկիա, V դ. սկսած մինչև XI դ. կեսը, շուրջ 600 տարվա ընթացքում Հայաստանից դեպի ուրիշ երկրներ, գլխավորապես դեպի Արևմուտք, տեղի են ունեցել բազմաթիվ մասնակի կամավոր գաղթեր՝ առևտրական, քաղաքական և այլ դրդառիթներով, իսկ ավելի շատ են եղել հարկադրված և բռնի գաղթերը։

Բյուզանդական զորամասերում հոչակված էին բազմաթիվ բարձրաստիճան հայ զինվորականներ, որոնցից մի քանիսը բարձրացան մինչև իսկ կայսերական գահ։ Այդ զինվորականներից շատերը իրենց զորքերով հաստատվում էին Կ. Պոլսում և մոտակա վայրերում։

Հուստինիանոս կայսեր ժամանակվանից (527—565) Բյուզանդիան ուներ Հայաստանի վերաբերմամբ իր հատուկ ծրագիրը, որի նպատակն է եղել մի կողմից որքան կարելի է թուլաց-

[48] „Известия Государственного Географического общества", 1939, № 9. Бабков И. И., Очерки по политической и культурной географии Крыма, ч. II (I մասը՝ № 7-ում). Древнейшая армянская надпись Феодосинского музея (к вопросу о времени появления армян в Тавриде)։

[49] Նույն տեղում, էջ 1383։

նել Հայաստանի հզորությունը, նվազեցնել նրա ընդդիմադրական ունակությունը, զլատել զինվորական ուժերի կարողությունը, երկիրը դատարկել հայերից և տեղահանված հայերի ձեռքով պաշտպանել իր պետության հնռավոր սահմանները օտարների հարձակումներից, իսկ մյուս կողմից՝ իր եկեղեցու օգնությամբ հայ ժողովրդին դարձնել հունադավան և այդպիսով ձուլել հույների մեջ։ Ի կատարումն այդ ծրագրի, Հուստինիանոսը Հայաստանը բաժանեց չորս մասերի[50], առանց որևէ կապ հաստատելու նրանց միջև, մեծ քանակով հայկական զորամասեր զաղթեցրեց Թրակիա և բնակեցրեց այնտեղ։ Մորիկ կամ Մավրիկիոս կայսրը (582—603), Սեբեոսի պատմելով, 601 թ. Թրակիա է զաղթեցրել 30 հազար հայ զինվորականներ և բնակեցրել Դանուբ զետի ստորին շրջանում, հիմնելով այնտեղ առանձին զինվորական բնակավայրեր։

Այսպիսի զաղթեր տեղի են ունեցել 760 թ. Կոստանդին Կոմպրոնիմոսի օրով՝ դարձյալ դեպի Թրակիա։ Հուստինիանոս II-ը 688 թ. նվաճելով Հայաստանը, ութ հազար հայ ընտանիք զաղթեցրեց Փոքր Ասիա և Թրակիա։ Խոշոր զինվորական զաղթեր տեղի են ունեցել Նիկեփոր I-ի (802—811) և Հովհաննես Չմշկիկի (969—976) ժամանակներում։ Վասիլ II կայսրը (Ռոմանոս II-ի որդին) 988 թ. փորձեց հայերի մի մեծ զանգված բռնի զաղթեցնել Մակեդոնիա, որպեսզի այնտեղ նրանցից կազմի պաշտպանողական զնդեր բուլղարների դեմ, որոնք հաճախ հարձակվում էին Բյուզանդիայի հյուսիսային սահմանների վրա։ Վասիլ II-ի քաղաքականության դեմ զայրացած հայերը, սակայն, անցան Բուլղարիա, շուտով զրավեցին ժողովրդի համակրանքը և ճանաչվեցին Բուլղարիայի իրավահավասար քաղաքացիներ։

Թրակիայի հայերը ժամանակի ընթացքում սկսեցին մտնել պետական և զինվորական ծառայության մեջ։ Տեղի հայ զաղութը անդադար մեծանալով, Ֆիլիպոպոլ քաղաքը դարձրեց իր կուլտուրական կենտրոն։ Զբաղվելով առևտրով և երկրագործությամբ, հայերը աստիճանաբար տարածվեցին դեպի հյուսիս և արևելք։ Անցնելով Դանուբի մյուս ափը, նրանք հետզհետե թափանցեցին Բեսարաբիա և Ղրիմ, բնակություն հաստատեցին Ակքերմանում, Իզմայիլում, Կիլիտյում, Բենդերիում, Քովշանում և այլ վայրերում։

Հայտնի զրիմագետ Նիկոլայ Մուրզակևիչը իր հնագիտական հետազոտությունների հիման վրա հաստատում է, որ այժմվա Հին Ղրիմ, իսկ ջենովացիների իշխանության օրով՝ Սոլխաթ կամ Սուրխաթ կոչված քաղաքը հիմնված է IX դ., երբ արևելյան առևտրի հոչակավոր ճանապարհը դեպի հյուսիս անցնում էր Ղրիմի վրայով[51]։ IX դ. Ղրիմը պատկանում էր խազարներին և կազմում նրանց լայնածավալ կագանատի մի մարզը։ Խազարները Ղրիմ մտան 679 թ. և տիրեցին մինչև XI դարի կեսերը[52]։ Խազարիայի բնակչության մեջ կային և քրիստոնյաներ։ Բորիս Միլլերի կարծիքով, այդ քրիստոնյաները եղել են հայ վաճառականներ։ Խազարները խոշոր առևտուր են ունեցել Կովկասի և Կասպից ծովի հարավային ափերի հետ, որտեղից դեպի հյուսիս են արտահանել մեծ քանակով բարձրորակ մետաքսի ամենաթանկարժեք տեսակները։ Մետաքսի այդ առևտուրը գտնվել է զլխավորապես հայերի ձեռքին։ Միլլերը գրում է, որ շուվաշները մինչև այսօր էլ մետաքսը անվանում են «երմեն պուրսան», այսինքն՝ հայկական մետաքս։ Գտնելով, որ այդ առևտրի մեջ մեծ է եղել հայերի դերը, Միլլերը գրում է. «Գուցե Կազանի մարզի հայկական «բուլղար» առևտրական զաղութը... կապված լինի այն հայերի հետ, որոնք, անկասկած, որպես առևտրական միջնորդներ լավ հայտնի են եղել նաև խազարներին»[53]։

Լիովին համամիտ լինելով Միլլերի այս կարծիքին, տեղին ենք համարում մեջ բերել և հետևյալ փաստերը։ Խազարների երկրում քրիստոնեություն էին դավանում հայերն ու հույները, որոնք ապրում էին Ղրիմի և մասամբ Թամանի թերակղզիներում։ Իթիլում, Սառքելում, Սեմենտերում և Մաճառում հույներ երբեք չեն ապրել և չեն մասնակցել Կասպից ծովի հարավային ափերի մետաքսի առևտրին։ Նրանք այդ վայրերում զաղութներ չեն ունեցել։ Մնում են միայն հայերը, որոնք Իթիլում ունեցել են իրենց առևտրական զաղութը և զբաղվել զլխավորապես մետաքսի առևտրով։ Ղրիմում խազարների շահավետ քաղաքն է եղել Սոլխաթը (Սուրխաթը) և նրա կողքին գտնվող Խազարեթ ավանը։ Ինչպես արդեն տեսանք, Մուրզակևիչի հետազոտությունների համաձայն, Հին Ղրիմը, որ առաջ կոչվել է Սոլխաթ, հիմնված է IX դ.։ Նրա վրայով

---

[50] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908.

[51] Н. Мурзакевич, Арабская надпись в местечке «Эски-Крым», տե՛ս „Записки Одесского Общества истории и древностей", кн. II, Одесса, 1848, էջ 529—531։

[52] Տե՛ս В. К. Виноградов, Феодосия, Исторический очерк. Феодосия, 1884, էջ 23։

[53] Б. Миллер, Об армянских надписях в Болгарах Казани, տե՛ս „Известия Российской Академии материальной культуры", т. IV, 1925, էջ 65 և 69։

է անցել միջին դարերի Արևելյան առևտրի քարավանային ճանապարհը դեպի Միջին Ասիա և Հնդկաստան։ Այդ պատմական ճանապարհի վրա գտնվում են երկու գեղեցիկ հովիտներ, որոնք մինչև այժմ էլ կոչվում են «ինտոլներ», որ նշանակում է Հնդկաստանի ճանապարհ[54]։

Խազարների օրով Սոլխաթը ունեցել է փոխանակային մեծ առևտուր Կովկասի և արևելյան երկրների հետ։ Այդ արդյունավետ առևտրի շնորհիվ քաղաքը շատ մեծացել և հարստացել է։ XI դ. սկզբին, երբ Ասիայից եկած զփչաղները դրավեցին Հարավային Ռուսաստանը և մտան Սև ու Ազովի ծովերի տափաստանները, մուտք գործեցին նաև Ղրիմ։ Սոլխաթը դարձավ նրանց ուլուսի «կայանը», այսինքն՝ մայրաքաղաքը։ Ըստ Մարտիրոս Ղրիմեցու, այդ եղել է 1051 թ.[55], իսկ 1006 թ. գրված հունական Սենաքսիրի (Հայսմավուրքի) լուսանցքներում գրված հիշատակարանի համաձայն՝ 1050 թ.[56]։ Յու. Դյուբների կարծիքով ևս այդ դեպքը տեղի է ունեցել 1050 թ.[57]։

Այդ երեք առևտրաշահ քաղաքներում էլ զփչաղների օրով ապրել ու աշխատել են հայ վաճառականներ ու արհեստավորներ։

Սուդակում հայերի գոյության փաստը և բնակչության մեջ նրանց մեծամասնություն լինելը մեզ հայտնի են արդեն Ֆ. Բրունի ուսումնասիրություններից։ Հայտնի է նմանապես, որ Թամանի թերակղզում XI դ. սկզբից ապրել են կոսոխացի հայերը[58], իսկ Տմուտարխանում նույն ժամանակ հայերն ու վրացիները հարաբերության մեջ են եղել ռուսների հետ[59]։ Անկարելի բան է, որ Թամանում ապրեին հայեր, իսկ Ղրիմում՝ ոչ։ Թամանը տնտեսապես միշտ եղել է Ղրիմի անբաժան մասը և քաղաքականապես էլ կապված է եղել նրա հետ։ Հայերը և հույները Ղրիմից են մտել Թաման։ XIII դ. (1223) Ղրիմ եկան թաթարները։ Նրանք զփչաղներից խլեցին այդ քաղաքները ու ամբողջ Ղրիմը։

Սոլխաթը թաթարների օրով ավելի մեծացավ։ Համմերը իր «Ոսկե Հորդայի պատմություն» գրքում գրում է. «Ղրիմ քաղաքը XIII դ. երկրորդ կեսում Ասիայի ամենալավ քաղաքներից մեկն էր։ Լավ ձի հեծած հազիվ կարելի էր կես օրվա ընթացքում պտտվել նրա շուրջը։ Եգիպտոսի սուլթան Բեյբարսը, որ ծագումով զփչաղ էր և Բերկե խանի դաշնակիցը, Ղրիմում շինեց մզկիթ և խանութաշարք, որոնց պատերը շարված էին մարմարով և սպիտակ ծիրանաքարերով։ Այնտեղ բաց արին դպրոցներ և ուսումնարաններ, ուր իսլամի ոգով ավանդվում էին գիտություններ, որոնց հաջողությունը վերջը փառավորեց Ղրիմ քաղաքի անունը։ Խորեզմայի (Խիվայի) քարավանները Ղրիմ էին հասնում 3 ամսվա ընթացքում... Ղրիմը (Սոլխաթը—Խ. Փ.) և Կաֆան ստրկավաճառ շուկաներ էին։ Գերիներին բերում էին Զփչաղից և տանում Եգիպտոս»[60]։

Առևտրական գործողությունները մուսուլմանների հետ դյուրացրին մահմեդական կրոնի տարածումը թաթարների մեջ։ Բերկե խանը ընդունեց Մահմեդի ուսմունքը և հաջողությամբ տարածեց իր ժողովրդի մեջ։ XV դ. Գիրեյները Ղրիմի խանության մայրաքաղաքը տեղափոխեցին Բախչիսարայ, բայց Հին Ղրիմը երկար ժամանակ չկորցրեց իր խոշոր նշանակությունը։ Տարիներ շարունակ խաները իրենց արծաթյա դրամները դարձյալ կտրում էին նախկին մայրաքաղաքում։

Մենք վերևում տեսանք արդեն, որ Սոլխաթը հիմնված է IX դ., գիտենք, որ քաղաքի անունը թաթարները են փոխել և դարձրել Հին Ղրիմ (Էսկի Ղրիմ), սակայն մինչև այժմ լրջորեն չի ուսումնասիրված, թե ո՞վ է եղել նրա հիմնադիրը և ովքեր են հոչակել նրա առևտրական խոշոր նշանակությունը։

Ս. Խաչ վանքի արձանագրությունները և այլ տվյալներ վկայում են, որ այդ վանքի կառուցումն սկսվել է 1330 թ. և ավարտվել 1338 թ.։ Վանքի անտառում գտնվում են մի այլ հին եկեղեցու ավերակները, երևում են նրա մերկացած հիմնաքարերը, եկեղեցու մեջտեղում մինչև

---

[54] Տե՛ս Н. Барсамов и П. Заболецкий, Путеводитель по Феодосийскому музею, Феодосия, 1927, էջ 5։

[55] Ա. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 143—144։

[56] „Записки Одесского Общества истории и древностей", кн. V, էջ 591—601։

[57] Ю. Гюбнер, նշվ. աշխ., էջ 4։

[58] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 232։

[59] «Հայ ժողովրդի պատմություն», մ. I, Երևան, 1956, էջ 233։

[60] Hammer, Geschichte der Goldenen Horde in Kiptschak, des ist der Mongolen in Russland, Pesth, 1840, էջ 254, 284։

այժմ էլ պահպանվել է քառանկյունի քարաշեն և շատ խոր ջրհորը։ Մինաս Բժշկյանի կարծիքով, այս վանքի խցերում են գրված մեծ ճաշոցը և շատ ձեռագրեր[61]։

Եթե 1338 թ. կառուցված վանքը մինչև այժմ, ավելի քան վեց դար, անվնաս կանգնած է, համարձակ կարելի է ենթադրել, որ այդ հին եկեղեցու շենքը ևս, որ նույնպես քարաշեն է եղել, մինչև իր փլատակվելը, մինչև նոր վանքի կառուցվելը, կանգնած է եղել 3—4 դարից ոչ պակաս։ Եթե 1338 թ. ետ գնանք 3—4 դար, կհասնենք առնվազն X—XI դ.։

Հին Ղրիմ քաղաքի մոտերքը, Ս. Խաչ սարի ստորոտում է եղել նաև Խազարեթ մեծ ավան, որի ավերակները հիմա էլ երևում են և որի անունը ցույց է տալիս նրա կապը խազարների հետ։

Թե ինչու է Հին Ղրիմը թաթարներից առաջ կոչվել Սոլխաթ կամ Սուրխաթ, ստուգաբանորեն շատ դժվար է պարզել։ Պրոֆ. Վ. Սմիրնովի կարծիքով Սոլխաթ բառը ջենովացիների կողմից աղավաղված հայոց Սուրբ-Խաչ հարազրությունն է[62]։ Նրա կարծիքով, ինչպես վանքը և նրա լեռը, այնպես էլ քաղաքը սկզբում կոչվել են «Սուրբ Խաչ»։ Եթե այդ եզրակացությունը ընդունենք որպես պատմական ճշմարտություն, համարձակ կարող ենք ենթադրել, որ քաղաքը հիմնողները և նրան այդ անունը տվողները եղել են հայերը։ Վանքի, քաղաքի և Խազարեթ ավանի գոյությունը մի վայրում պարզ ապացուցում է, որ այդտեղ IX դ. գոյություն է ունեցել բավական մեծ մի հայ գաղութ։ Հին Ղրիմն է եղել Ղրիմի մեծաքանակ հայ գաղութի օրրանը։ Յուլիան Կուլակովսկին, խոսելով XIII դ. Հին Ղրիմի ազգաբնակչության տարբեր կազմի մասին, հայերին համարում է ոչ-եկվոր, այլ բնիկ տեղացիներ[63]։

Եթե հայերը IX դ. հիմնել են Սուրբ-Խաչ քաղաքը, որ հետո դարձել է Սոլխաթ կամ Սուրխաթ, իսկ թաթարների օրով՝ Էսկի-Ղրիմ, հարց է ծագում՝ որտեղի՞ց էին եկել այդ հայերը։ Ռայնալդոսի կարծիքով Տավրոսի հայերը Փոքր Ասիայի այն հայերն են, որոնք սարացինների հալածանքներից վախչելով այստեղ էին ապաստանել[64]։ Այստեղ ուշադրության արժանի է երկու հանգամանք. նախ նա ցույց է տալիս հայերի որտեղից գաղթած լինելը և գաղթի պատճառը, իսկ երկրորդ՝ նա չի գործածում Ղրիմ բառը, թերակղզին անվանում է Տավրոս։ Այդ նշանակում է, որ հայերը Ղրիմ են գաղթել թաթարների գալուց առաջ, որովհետև թերակղզին Ղրիմ անունը ստացավ թաթարներից, 1223 թ. հետո, երբ նրանք տիրեցին ամբողջ Ղրիմը։ Ռայնալդոսի այս կարծիքը հաստատում են և պատմական փաստերը։ Պետք է ավելացնել նաև, որ Փոքր Ասիայից հայերը գաղթել են ոչ միայն սարացինների, այլև քրիստոնյա հունաց եկեղեցու հալածանքների պատճառով։

VII—IX դդ. դեպի Փոքր Ասիայի հարավ-արևելյան մասն սկսեցին ներթափանցել բազմաթիվ թուրքական ցեղեր։ Նորեկները հետզհետե ուժեղացան, բազմացան և շուտով սկսեցին իրենց ավերիչ արշավանքները քրիստոնյաների դեմ, սկսեցին ջարդել ու քշել նրանց իրենց հողերից։ Թուրքական այդ ցեղերը հող պատրաստեցին սելջուկների ապագա արշավանքների հաջողության համար. նրանք հաստատվեցին Նիկիայում։ Սելջուկները եկան և հիմնեցին Իկոնիայի պետությունը, մայրաքաղաք ընտրելով Կոնիան[65]։ Սելջուկները ևս հաստատվեցին որպես նստակյաց ժողովուրդ՝ իրենց պետական մարմնով, զորքով և մայրաքաղաքով[66]։ Հայերը ոչ կազմակերպված պետական մարմին ունեին, որ զեկավարեր իրենց հասարակական կյանքը, ոչ էլ կանոնավոր զորք. այդ իսկ պատճառով ստիպված եղան իրենց հողերը զիջել կազմակերպված սելջուկներին։

Հույների կրոնական հալածանքները, սելջուկների բարբարոս արշավանքները ստիպեցին Փոքր Ասիայի հայ գաղթականներին դիմել նոր գաղթի, որոնել մի նոր ապահով բնակավայր։ Հայ վաճառականությունը վաղուց ի վեր առևտրական գործերով կապված էր խազարների կաղանատի հետ։ Այդ վաճառականների միջոցով ժողովուրդը լավ տեղյակ էր, որ խազարների երկրում գոյություն ունի կրոնական կատարյալ հանդուրժողություն, որ ամեն ոք ազատ դավանում է իր ընտրած կրոնը։ Սկզբում վաճառականները, ապա և մնացած հայերը սկսեցին մաս-մաս անցնել Տրապիզոն, այնտեղից էլ՝ Սև ծովի առափնյա քաղաքները, Դոնի, Դնեպրի,

---

61 Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 324—328։

62 В. Д. Смирнов, Археологическая экскурсия в Крым летом 1886 г., տե՛ս „Записки Восточного отдела Ист. археол. общества", т. I, вып. IV, 1887, էջ 272—273։

63 Ю. Кулаковский, նշվ. աշխ., էջ 111։

64 Raynaldus, Annales Eclesiastici, 1318։

65 В. А. Гордлиевский, Государство сельджуков Малой Азии, Москва, 1941.

66 S. Y. Laurent, Byzance et l'origiene du sultanat de Roum, Paris, 1930.

Դնեստրի և Դանուբի գետարերանները, Ղրիմ և Թաման, որոնք կազմում էին խազարների երկրի մի մասը[67]։ Այս գաղթականների մի հատվածը հասավ մինչև Վոլգայի ստորին շրջանը. մի մասը հիմնվեց Իթիլում, իսկ մյուսը, ինչպես ենթադրվում է, Վոլգայով բարձրացավ մինչև Ղազան և այնտեղ հիմնեց իր հռչակավոր առևտրական «Բուլղար» գաղութը։ Խազարները Ղրիմ մտան 679 թ.[68]։

Ղրիմահայ պատմության համար հետաքրքրական է նաև հետևյալ փաստը. X դ. Խերսոնեսում ապրում էր հայտնի հայ պատրիկ Կալոկիրը։ Բյուզանդական կառավարությունը դիմեց նրան և հանձնարարեց իր անունից բանակցություն վարել ռուս մեծ իշխան Սվյատոսլավի հետ, համոզել վերջինիս պատերազմել բուլղարների դեմ[69]։ Կալոկիրը Խերսոնեսի պետության պատրիկ էր։ Իրեն հատկացված բարձր կոչումը ստանալու համար հարկավոր էր երկարամյա պաշտոնավարություն իր կամ իր նախնիքների կողմից։

* * *

Ղրիմի թերակղզին մի մեծ հնագիտական թանգարան է։ Ղրիմում, գլխավորապես Խերսոնեսում, կատարված են բազմաթիվ պեղումներ, բայց այդ ամենը վերաբերում են հունական անցյալին։ Օգնության պատմա-հնագիտական ընկերության արժեքավոր պարբերականի երեք տասնյակից ավելի ստվար հատորները մեծապես նպաստել են Սև ծովի ավազանի հունական գաղութների պատմության լուսաբանությանը։ Սովետական իշխանության տարիներին Հին Ղրիմում կատարվեցին խոշոր պեղումներ, հայտնաբերվեցին հռչակավոր մեդրեսեի և քարվանսարայի շենքերը[70]։

Հարավային Ղրիմում մեծ թիվ են կազմում հայկական նյութական մշակույթի մնացորդները։ Քարաշեն բերդերի, պարիսպների, կամուրջների, աղբյուրների և ջրմուղների, վանքերի և ուսումնարանների բազմաթիվ ավերակները սպասում են իրենց ուսումնասիրողներին։ Մինչև այսօր կատարված ընդհանուր պեղումները առանձին դեպքերում լույս են սփռում Ղրիմի հայերի անցյալի վրա։ Ուշագրավ է Էրմիտաժի կերամիկայի թանգարանի տնօրեն Պ. Բոկի կարծիքը Ղրիմի կերամիկայի մասին։ Նա հաստատում է, որ Ղրիմի կերամիկան ունի կովկասյան, ավելի շուտ հայկական ծագում[71]։ Է. Ռ. Շտերը գտնում է, որ կերամիկան Ղրիմ է մտել VII դ.[72]։ Խեցեգործությունը Ղրիմում միշտ եղել է հայերի ձեռքին, ջենովացիք չեն զբաղվել այդ գործով[73]։ Եթե խեցեգործությունը Ղրիմում գոյություն ունի VII դ. և ունի կովկասյան, ավելի շուտ՝ հայկական ծագում, նշանակում է VII դ. Ղրիմում հայեր ապրել են։

Այս և նման փաստերը իրավունք են տալիս ենթադրելու, որ հայերը Ղրիմ մուտք են գործել ոչ թե XIV դ., այլ շատ վաղուց, համենայն դեպս VIII դ. ոչ ուշ։ Անշուշտ, այս ենթադրությունը կարիք ունի գիտական լուրջ ստուգման և բազմակողմանի հետազոտության։ Միայն պեղումները, գետնի և ավերակների տակ թաքնված համր վկաները կարող են փարատել մեր կասկածները և տալ ճշգրիտ պատասխաններ։ Առայժմ հաստատ կարելի է ասել, որ ճիշտ է գիտնականների այն կարծիքը, թե հայերի մասսայական գաղթը Հայաստանից դեպի Ղրիմ և Եվրոպա տեղի է ունեցել ընդհանուր հայկական գաղթի հետ միասին, XI դ., Բագրատունիների անկումից և սելջուկների արշավանքները սկսվելուց հետո, սակայն դա դեպի Ղրիմ տեղի ունեցած գաղթի սկիզբը չէր։ Դրանից շատ առաջ Փոքր Ասիայում, Բալկաններում և այլ վայրերում կային կամա թե ակամա կազմված հայ գաղութներ։ Ահա այդ գաղութների բնակիչները, անբավական իրենց նոր բնակավայրերում տիրող կարգերից, եղել են Ղրիմում հաստատված առաջին հայ գաղթականները։

Պեղումների կարիք ունեցող պատմական վայրեր Ղրիմում շատ կան։ Հնագետների գործն է, անշուշտ, թե որտեղից կսկսեն իրենց պեղումները։ Ներկա հոդվածում շոշափված հարցի լու-

---

[67] Г. Айвазовский, Նշվ. աշխ., էջ 550։

[68] В. К. Виноградов, Феодосия. Исторический очерк, էջ 23։

[69] Ю. Кулаковский, Նշվ. աշխ., էջ 111։

[70] И. Н. Бороздин, Солхат, Москва, 1926.

[71] P. Bock, Poteries vernissels... էջ 245։ Նույնը՝ П. Бок, Керамика со свинцовой глазурью Крыма и Кавказа.

[72] Э. Р. Штери, Феодосия и ее керамика, Одесса, 1906, էջ 61։

[73] И. А. Гольдшмидт, Каффа—Генуэзская колония в Крыму в конце XIII—первой половины XV в., Москва, 1952 (диссертация), էջ 103։

սարանության տեսակետից առավել կարևոր ենք համարում այն վայրերը, ուր մեծ է եղել հայերի կատարած դերը։ Ղրիմի հայ գաղութի օրրան Հին Ղրիմը իր ավերակներով՝ վանքի անտառում և Ջար-խափան կամուրջի մոտ, Թեոդոսիան՝ իր Ս. Սարգիս եկեղեցու խաչքարերի արձանագրություններով, չեն կարող անուշադիր մնալ։ Ղրիմի գաղութը թեպետ չի ունեցել իր պետական մարմիններ, չի կտրել իր դրամը, բայց ունեցել է խոշոր նշանակություն թե՛ միջազգային առևտրի, թե՛ Ղրիմի և թե՛ հայ գաղթականության պատմության մեջ։ Նա արժանի է մեծ ուշադրության և լուրջ ուսումնասիրության։

КОГДА ПРОИСХОДИЛО ПЕРЕСЕЛЕНИЕ АРМЯН В КРЫМ

Х. А. ПОРКШЕЯН (Нальчик)

(Резюме)

Освещая вопрос о генезисе ранних армянских поселений в Крыму, автор останавливается на обзоре ряда письменных армянских первоисточников, давших основание отнести начало упомянутых поселений к 1330, 1331 и 1334 годам. Ссылаясь на более древние армянские памятники материальной культуры в Крыму и на свидетельства опубликованных румынским исследователем Братиану документов о торговых сделках генуэзцев с армянскими купцами в Крыму, автор показывает, что армянские поселения в Крыму пользовались большим экономическим влиянием уже к концу XIII в и что массовое переселение армян в Малую Азию, Византию, на Балканский полуостров и в Крым имело место начиная с середины XI в., в результате сельджукских завоеваний. Однако появление армян в Крыму относится к более раннему времени. Угнетаемые преследованиями Византийской империи, притесняемые малоазиатскими правителями или побуждаемые коммерческими связями и интересами, армяне начали проникать в Крым еще в период господства на полуострове хазар и кипчаков. Ретроспективный обзор фактов, относящихся к истории армянских поселений в Крыму, дает нам основание отнести появление первых поселенцев-армян в Крыму ко времени арабских нашествий в Армению, т. е. к VII—VIII вв.